ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15-16-39

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

23 հունիսի 2016թ. քաղաք Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ռ. ՍԻՆՈՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝ Ա. Լոպոյան
Ռ. Դալլաքյան
Հ. Իգիթյան
Հ. Բաբայան

Հրավիրված՝ Բ. Ղալոյան
Խ. Զարգարյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 21/06/16թ. «Գանձասար-Կապան-99»-«Ալաշկերտ-99» (17199) խաղը չկայանալու «Ալաշկերտ-99» թիմի չներկայանալու պատճառով /զեկուցող Բ. Ղալոյան/

2. Ֆուտզալի և Կանանց ֆուտբոլի բաժանմունքի պետ Խ. Զարգարյանի 21/06/2016թ. և 22/06/2016թ. զեկուցագրերի քննարկումը /զեկուցող Խ. Զարգարյան/

1. 21/06/16թ. «Գանձասար-Կապան-99»-«Ալաշկերտ-99» (17199) խաղը չկայանալու «Ալաշկերտ-99» թիմի չներկայանալու պատճառով

ՈՐՈՇԵՑԻՆ՝

21/06/16թ. «Գանձասար-Կապան-99»-«Ալաշկերտ-99» (17199) խաղը չկայանալու «Ալաշկերտ-99» թիմի չներկայանալու պատճառով, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Ալաշկերտ-99» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

2. Ֆուտզալի և Կանանց ֆուտբոլի բաժանմունքի պետ Խ. Զարգարյանի 21/06/2016թ. և 22/06/2016թ. զեկուցագրերի քննարկումը

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2.1 Խախտվել է 2015-16թթ. Կանանց ֆուտբոլի ամառային ստուգողական մրցաշարի կանոնակրգի հոդված 6-ի 4-րդ կետի պահանջները:
17.06.2016թ-ի Արթիկ Ա.Ե — Գյումրի աղջիկներ 2 (ԿՄ4- 002) Արթիկ Ա.Ե խաղին ներկայացել է առանց գլխավոր մարզչի Արմեն Երիցյանի (N 53) և փոխարինող մարզչի, ինչպես նաև թիմը չի ունեցել համապատասխան քանակի մարզահագուստ:

Ա.Երիցյան անհատ ձեռներեցին տուգանել 30000 դրամ:

2.2 Տրիբունա ակումբի ֆուտբոլիստ Անի Ասատրյանը (N 27042), մարզիչ Առաքելյան Սենիկ (N 5489), կանանց ֆուտբոլի ամառային մրցաշարին մասնակցել է ժամկետանց ֆուտբոլային անձնագրով: 15 տարին լրանալու պատճառով ֆուտբոլիստի անձնագիրը պետք է փոխարինվեր նոր անձնագրով, բայց թիմը ժամանակին չի ներկայացրել համապատասխան փաստաթղթերը, որի պատճառով ֆուտբոլիստը մասնակցել է 2 հանդիպման 17/06/2016թ, և 19/06/2016թ: 3-րդ հանդիպմանը մասնակցել թույլ չի տրվել:

Տրիբունա ակումբին տուգանել 8500 դրամ:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԼՈՊՈՅԱՆ